

**ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ
ԱՌԵԿՏՐԱՅՆԱՑՄԱՆ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

Սարգիս ՂԱՆԹԱՐՁՅԱՆ

տ.գ.դ., պրոֆեսոր

Արսեն ՀԱՅՐԻՅԱՆ

ԵՊՀ Կառավարման և գործարարության
ամբիոնի ասպիրանտ

Բանալի բառեր. մտավոր սեփականություն, արդյունաբերական սեփականության
օբյեկտներ, առևտրայնացում, առևտրայնացման հիմնախնդիրներ

Հայտնի է, որ յուրաքանչյուր երկրի զարգացման հիմքում մեծ դեր է
հատկացվում ինովացիոն գործունեությանը: Եթե վերջինս բացակայում է,
ապա, որպես կանոն, տվյալ երկրի արդյունաբերությունը մոտենում է
լճացման շեմին: Ինովացիաները նպաստում են արտադրության շահա-
վետության բարձրացմանը: Պատահական չէ, որ արդյունաբերական սե-
փականության օբյեկտների (ԱՍՕ) շուկայականացումը (գյուտեր, արդյու-
նաբերական նմուշներ, ռացիոնալիզատորական առաջարկություններ, օգ-
տակար սարքեր, նոու- հաուներ) թույլ է տալիս տվյալ ձեռնարկությանը
հասնել զգալի տնտեսական առավելությունների մրցակիցների նկատ-
մամբ: Սովորաբար որպես մարդկանց մտավոր գործունեության արդյունք
հանդես եկող գիտատեխնիկական արտադրանքը առանց լրացուցիչ ֆի-
նանսական ծախսերի և հաշվարկների չի կարող անմիջապես ներդրել
արտադրությունում, քանի որ այն դեռևս պետք է հաստատի իր առև-
տրային արժեքը:

Առևտրայնացման գործընթացի տակ հասկանում ենք այնպիսի գոր-
ծողություններ, որոնք ուղղված են ապահովելու ինովացիոն գործունեու-
թյան արդյունքների շուտափույտ ներդրումը քաղաքացիական շրջանա-
ռության մեջ: Համաշխարհային փորձը ցույց է տվել, որ առևտրայնացման
գործընթացում ամենամեծ հաջողությունների են հասնում այն ֆիրմա-
ները, որոնց կազմում գործում են ինովացիոն կենտրոններ կամ լաբորա-
տորիաներ, որոնք կատարում են գիտահետազոտական և փորձակոնս-
տրուկտորական աշխատանքներ (ԳՀՓԿԱ): Եթե փորձենք կիրառել այս մո-
տեցումը ՀՀ-ում գործող կազմակերպություններում, ապա վերջիններս
պետք է բավարարեն հետևյալ պահանջներին.

1. Ունենան սեփական մշակումներ, գյուտեր, արդյունաբերական
նմուշներ, որոնք ստեղծվել են համաձայն տվյալ կազմակերպության
գործունեության հիմնական ուղղությունների:

2. Ունենան հեռանկարային մշակումներ, որոնք վերաբերում են վերը նշված ԱՍՕ-երին և ստեղծվել են պետական/մասնավոր պատվերների արդյունքում:

ԱՍՕ-երի առևտրայնացումից շոշափելի տնտեսական արդյունքներ ստանալու համար որպես պարտադիր պահանջ պետք է նշել ՀՀ-ում համապատասխան օրենսդրական հիմքերի առկայությունը: Ժամանակին հեղինակներից մեկը ստիպված էր հիշեցնել, որ իր կողմից մշակված երեք փաստաթղթերի նախագծերը (Մտավոր սեփականության օբյեկտների գնահատման մասին, ՀՀ ստանդարտ մտավոր սեփականության գնահատման մասին և Մտավոր սեփականության օբյեկտների հաշվառում և գնահատում. Մեթոդական ցուցումներ) առ այսօր չեն հաստատվել և ներդրվել պրակտիկայում¹: Սա է պատճառներից մեկը, որ հանրապետության ինովացիոն ներուժը մինչ օրս մնում է չպահանջված:

Հայտնի է, որ ԱՍՕ-ի եկամտաբերությունը զգալիորեն ավելի բարձր է շենքերի և սարքավորումների համեմատությամբ: Այսպես՝ ապրանքների, տեխնոլոգիաների և գյուտերի արտահանման գործում տարեցտարի աճում է տեխնոլոգիաների փոխանակման մասնաբաժինը: Համաշխարհային արտահանման կառուցվածքում 2013-2014 թվականներին մտավոր սեփականության օբյեկտների օգտագործման դիմաց կատարված վճարների տարեկան հավելաճը կազմել է 6%՝ հասնելով 300 մլրդ ԱՄՆ դոլարի: Որպես արտահանող առաջատարներ հանդես են գալիս ԱՄՆ-ն (131636 մլն. ԱՄՆ դոլար), ԵՄ երկրները (90541 մլն. ԱՄՆ դոլար) և Ճապոնիան (36832 մլն. ԱՄՆ դոլար)²:

Այս համատեքստում հետաքրքրական է ծանոթանալ ՀՀ ցուցանիշներին: Սկսած 1992 թվականից, երբ ՀՀ-ում ստեղծվեց կառավարությանն առընթեր արտոնագրային վարչությունը, մեկնարկեց մտավոր սեփականության (ՄՍ) վերաբերյալ օրենսդրական ակտերի մշակման և հաստատման գործընթացը: Առ 2016 թվականը հանրապետությունում գրանցված է 27128 պահպանվող օբյեկտ, որի ավելի քան 86%-ը (թվով՝ 23476) բաժին է ընկնում ապրանքային նշաններին³ (Աղյուսակ1):

¹ С.Л. Кантарджян, Деловой Экспресс, Экономический еженедельник Армении 18 - 24 ноября 2002 №50 (498). <http://old.express.am/50/dmeridian.html>

² Առևտրի Համաշխարհային Կազմակերպություն: Միջազգային առևտրի վիճակագրություն 2015թ., Էջ 139

https://www.wto.org/english/res_e/statis_e/its2015_e/its15_trade_category_e.pdf

³ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության վիճակագրական տվյալներ <http://aipa.am/hy/patent/>

Հայ գյուտարարները, որոնք աշխատում են տարբեր ձեռնարկություններում և սովորաբար ներկայացնում են գիտահետազոտական ինստիտուտներ և ԲՈՒՀ-եր 1994-2016 թվականների ընթացքում մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության միջազգային բյուրո են առաքել գյուտի 85 միջազգային հայտ, որը կազմում է այդ նույն ժամանակահատվածում ազգային հայտատուների կողմից ներկայացված հայտերի ընդհանուր թվի (3291) 2.58%-ը, ազգային ու օտարերկրյա հայտատուների (այդ թվում՝ PCT ընթացակարգով) կողմից ներկայացված հայտերի ընդհանուր թվի 2.35%-ը⁴: Համաձայն մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ)՝ 2016 թվականի մայիս ամսվա դրությամբ միջազգային արտոնագիր են ստացել 81 հայկական գյուտեր⁵, իսկ առ 2016 թվականի հունվարի 1-ը դրանց թիվը կազմում էր 77: 1993-2015 թվականների ընթացքում մտավոր սեփականության գործակալության կողմից ազգային հայտատուներին տրված գյուտի արտոնագրերի թիվը կազմում է 2659, հետևաբար՝ մինչ 2016 թվականը գրանցված միջազգային հայկական արտոնագրերի թիվը կազմում է այդ նույն ժամանակահատվածում ազգային հայտատուների կողմից ստացած արտոնագրերի ընդհանուր թվի 2.9%-ը:

Համաձայն մտավոր սեփականության գործակալության տվյալների մինչ այժմ կնքվել են ԱՍՕ-երի նկատմամբ իրավունքների զիջման/փոխանցման և լիցենզային 1676 պայմանագրեր, որի 96%-ը բաժին է ընկնում ապրանքային նշաններին (Աղյուսակ2): Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ այս պայմանագրերի ճնշող մեծամասնությունը կնքված է հանրապետությունում գործող ձեռնարկությունների միջև և միայն շատ փոքր մասն է բաժին ընկնում արտասահմանյան ձեռնարկություններին: ՀՀ տնտեսական մրցուսակության բարձրացման նպատակով դեռ 2005 թվականին ՀՀ կառավարությունը ընդունեց ,ՀՀ ինովացիոն գործունեության հայեցակարգ-ը, իսկ 2006թ.-ին՝ ,Ինովացիոն գործունեության պետական աջակցության մասին ՀՀ օրենքը և որոշում ,Ինովացիոն ոլորտի զարգացման գերակա ուղղությունները սահմանելու մասին: Համաձայն վերոնշյալ իրավական ակտերի, սահմանվել են ինովացիոն գործունեության տեսակները, ինովացիոն գործունեությանը պետական աջակցության նպատակը և խնդիրները: Օրենքով սահմանվել է նաև ինովացիոն գործունեության պետական աջակցության հիմնական ուղղու-

⁴ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության տարեկան հաշվետվություն 2015, էջ 4-7, http://aipa.am/u_files/file/AnnualRep/Rep_h_2015.pdf

⁵ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն, PATENTSCOPE http://www.wipo.int/directory/en/details.jsp?country_code=AM

թյունները՝ վեճուրային, ներդրումային հիմնադրամների ստեղծման և ինովացիոն գործունեության համար բարենպաստ իրավական դաշտի ստեղծում, ֆինանսական և ներդրումային աջակցության, երաշխիքների տրամադրում, պետական գույքի օգտագործման իրավունքի տրամադրում, ինովացիոն ենթակառուցվածքների ստեղծման ու զարգացման աջակցություն, աջակցություն ինովացիոն գործունեություն իրականացնող կադրերի պատրաստմանը, վերապատրաստմանը և որակավորման բարձրացմանը:

Աղյուսակ 1. Ազգային և օտարերկրյա հայտատուների կողմից ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալություն ներկայացված և գրանցված ԱՍՕ-երի հայտերի քանակը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ:⁶

ԱՍՕ տեսակ	Ներկայացված հայտերի ընդհանուր թիվը	Որից՝ ազգային հայտատուների կողմից	Որից՝ օտարերկրյա հայտատուների կողմից	Ներկայացված վիճակագրության ժամանակահատված
Գյուտեր				
Ներկայացված հայտերի ընդհանուր քանակ	3824	3291	533	1993-2016
Արտոնագիր ստացած հայտերի քանակ	2985	2659	326	
Օգտակար մոդելներ				
Ներկայացված հայտերի ընդհանուր քանակ	469	436	33	1995-2016
Արտոնագիր ստացած հայտերի քանակ	434	402	32	
Արդյունաբերական նմուշներ				
Ներկայացված հայտերի ընդհանուր քանակ	468	286	182	1995-2016
Արտոնագիր ստացած հայտերի քանակ	377	220	157	
Ապրանքային նշաններ				
Ներկայացված հայտերի ընդհանուր քանակ	89427	76037	13390	1994-2016
Արտոնագիր ստացած հայտերի քանակ	23476	11884	11592	

⁶ Աղյուսակը կազմված է հեղինակների կողմից՝ վերը նշված աղբյուրի հիման վրա

Այս ճանապարհին ՀՀ կառավարության նախաձեռնությամբ նախագծվեցին մի շարք ներդրումային ծրագրեր, որոնք պետք է խթան հանդիսանային ՀՀ հետագա զարգացման համար⁷:

Աղյուսակ 2. Տեղեկատվություն 1995-2016 թվականներին արտոնագրերի և ապրանքային նշանների նկատմամբ իրավունքների փոխանցման/զիջման և լիցենզային պայմանագրերի գրանցման մասին⁸:

Տարեթիվ	Գրանցված լիցենզային պայմանագրեր (ներառյալ ենթալիցենզային պայմանագրերը)		Գրանցված զիջման պայմանագրեր (ներառյալ ֆրանչայզինգի պայմանագրերը)		Ընդհանուր
	Արտոնագրեր	Ապրանքային նշաններ	Արտոնագրեր	Ապրանքային նշաններ	
1995	0	0	0	0	0
1996	0	0	0	0	0
1997	0	0	1	0	1
1998	0	0	0	0	0
1999	0	14	0	62	76
2000	0	9	0	50	59
2001	0	4	1	58	63
2002	0	11	1	53	65
2003	0	11	1	50	62
2004	1	9	1	54	65
2005	1	12	4	59	76
2006	2	27	7	108	144
2007	1	11	1	75	88
2008	1	21	4	69	95
2009	2	24	4	60	90
2010	4	14	3	73	94
2011	1	19	2	59	81
2012	1	17	1	95	114
2013	3	21	1	78	103
2014	5	23	2	83	113
2015	2	11	2	114	129
2016*	2	43	2	111	158
Ընդհանուր	26	301	38	1311	1676

* Տվյալները՝ 2016թ. հունիսի 1-ի դրությամբ

7 ՀՀ կառավարության 2011թ. փոտրվարի 17-ի նիստի N6 արձանագրային որոշում «Ինովացիոն տնտեսության ձևավորման մեկնարկային ռազմավարության հայեցակարգ» http://www.arlis.am/Annexes%5C3%5Cqax6_11hav.pdf

⁸Աղյուսակը կազմված է հեղինակների կողմից: Աղբյուրը՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության 1995-2016 թվականների արդյունաբերական սեփականության պաշտոնական տեղեկագրեր:

Մասնավորապես՝ ՀՀ կառավարության որոշմամբ 2009թ. ապրիլի 23-ին ստեղծվեց ՀՀ Էկոնոմիկայի նախարարության ,Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոնը՝ ՊՈԱԿ-ը⁹՝ Գյումրու, Վանաձորի, Հրազդանի և Կապանի մասնաճյուղերով: Կենտրոնը հանդիսանում է ԱՊՀ անդամ պետությունների գիտատեխնիկական տեղեկատվության կառավարման միջպետական խորհրդի անդամ: Միաժամանակ, ՀՀ կառավարության որոշմամբ կենտրոնը հանդիսանում է գիտատեխնիկական տեղեկատվության միջպետական փոխանակումը համակարգող ՀՀ ազգային տեղեկատվական կենտրոն: ԱՊՀ անդամ պետությունների միջպետական ծրագրերի և ինովացիոն համագործակցության շրջանակներում վերջինս՝ համաձայն ՀՀ Էկոնոմիկայի նախարարության գրության հանդիսանում է նաև ՀՀ ազգային կոնտակտային կենտրոն: Կենտրոնը իրականացնում է նորարարությունների, նորամուծական գաղափարների զարգացման գործընթաց՝ աջակցելով դրանց առևտրայնացման նախապատրաստման համար անհրաժեշտ աշխատանքների իրականացմանը, մատուցելով գիտատեխնիկական տեղեկատվական և գրադարանային ծառայություններ:

ՀՀ-ում ԱՍՕ-երի առևտրայնացման ցածր ցուցանիշները ինչպես նաև կառավարության կողմից ինովացիոն ոլորտի զարգացման ռազմավարական ծրագրում հաստատված կրթական համակարգի արդիականացման անհրաժեշտությունը մատնացույց են անում ոլորտում ԱՍՕ-երի առևտրայնացմամբ զբաղվող մասնագետների պակասը կամ որակավորման ցածր մակարդակը:

Որպես կենտրոնի աշխատանքի դրական փորձ անհրաժեշտ է նշել ,Երիտասարդ նորարարի դպրոցը երկարաժամկետ ծրագրի շրջանակներում մշակված ,Նորարարարությունների կառավարումը կրթական դասընթացը, որի կառուցվածքը թույլ է տալիս անել ենթադրություն, որ շրջանավարտների ջանքերով կարելի կլինի բարելավել ԱՍՕ-ի առևտրայնացման գործընթացը: Նախատեսվում է իրականացնել 40-ժամյա վերապատրաստում և ըստ կազմակերպիչների ունկնդիրները ծրագրի ավարտին կկարողանան:

• Կիրառել ստեղծագործական և քննադատական մտածողությունը միջանձնային, բիզնես և կառավարչական կոմունիկացիաներում:

⁹ Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն
<http://www.innovcentre.am/hy/article/12>

- Խնդիրների լուծման ստեղծագործական մոտեցման միջոցով գեներացնել վառ և հետաքրքիր գաղափարներ, ստեղծել նոր ուղղություններ աշխատանքում, կարիերայում, բիզնեսում:

- Կիրառել ոչ ստանդարտ որոշումներ ամենատարբեր իրավիճակներում:

- Հասկանալ «ինովացիայի» ազդեցությունը տնտեսության զարգացման վրա, ինչպես նաև գաղափարը հաջողակ բիզնեսի վերածելու գործընթացի էությունը:

- Հմտանալ բիզնես մոդելավորման ու պլանավորման գործընթացներում և ձեռք բերել համապատասխան ունակություններ, որոնք անհրաժեշտ են «սթարթ-ափ» ստեղծելու և ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու համար:

- Տիրապետել բիզնեսի ճիշտ մեկնարկման բոլոր իրավական հարցերին և մտավոր սեփականության օբյեկտների պահպանման, կառավարման և առևտրայնացման համապատասխան ընթացակարգերին:

- Օգտագործելով «բիզնես մոդել»-ը որպես պլանավորման ու վերլուծության առաջադեմ գործիք, կազմել ապագա բիզնեսի և ձեռնարկության զարգացման տեսլականը, դրա գրաֆիկական, տեքստային և կոնցեպտուալ նկարագրությունները ըստ հաջողակ բիզնես ստանալու առանցքային բաղադրիչների:

- Ձեռք բերված գիտելիքները օգտագործել սեփական բիզնեսը հիմնելու մեջ:

- Ձեռնարկատիրությանը օժանդակող պետական աջակցության ծրագրերի, առևտրային միավորումների և բիզնես ցանցերի մասին ստացած տեղեկատվությունը օգտագործել իրենց բիզնեսի զարգացման համար:

- Ստեղծել start-up ընկերություններ, վավերականացնել գաղափարը ու առևտրայնացնել այն կամ ղեկավարել այդ գործընթացը:

Այնուհետև՝ 2011թ. ՀՀ կառավարության կողմից սահմանվեց կարճաժամկետ՝ մինչև 2014թ. գործողությունների ծրագիր¹⁰, ուղղված ազգային ինովացիոն համակարգի ձևավորմանն ու ամբողջականացմանը:

¹⁰ ՀՀ կառավարություն որոշում 30 հոկտեմբերի 2008 թվականի N 1207-Ն, Կայուն զարգացման ծրագիրը հաստատելու մասին
<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=51206>

Ծրագրի շրջանակներում նախատեսվում էր իրականացնել.

○ Իրավական բարեփոխումների նախաձեռնում (որակի համակարգ, մտավոր սեփականության իրավունքներ, ազատ տնտեսական գոտիներ և այլն):

○ Բիզնես կարողությունների զարգացում և բիզնես աջակցման հաստատությունների գործարկում (գաղափարների և նորարարության համաֆինանսավորման դրամաշնորհներ, վաճառքի ներկայացուցչություններ նպատակային շուկաներում):

○ Կրթական համակարգի արդիականացում առանձին մասշտաբային նախագծերի միջոցով:

○ Համակարգաստեղծ նախաձեռնությունների մեկնարկ (Ազգային գիտական լաբորատորիա, Ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոն, Քենդլ նախագիծ, Հայկական ազգային ճարտարագիտական լաբորատորիաներ և այլն):

Կառավարության կողմից կարևորվում էր նաև ժամանակակից ֆիզիկական ենթակառուցվածքների և խոշոր ներդրումային ծրագրերի առկայությունը:

Համաշխարհային շուկայում արդեն վաղուց մտավոր սեփականությունը դարձել է հիմնական զենք մրցակցային պայքարում: Ստեղծվում են կազմակերպություններ, որոնց գործունեության առարկան դառնում է մտավոր սեփականության օբյեկտների առևտուրը:

Խոշոր համաշխարհային ընկերությունները մշակում են նոր մոտեցումներ ինովացիոն գործունեության կառավարման ոլորտում՝ ապահովելով իրենց ռազմավարության հիմքում ԱՍՕ-ի նկատմամբ իրավունքների պահպանությունը և դրանց անօրինակ օգտագործման կանխարգելումը:

Սարգիս ՂԱՆԹԱՐԶՅԱՆ, Արսեն ՀԱՅՐԻՅԱՆ
**Արդյունաբերական սեփականության օբյեկտների առեվտրայնացման
ներկա վիճակը եվ հիմնախնդիրները ՀՀ-ում**

Բանալի բառեր. մտավոր սեփականություն, արդյունաբերական սեփականության օբյեկտներ, առևտրայնացում, առևտրայնացման հիմնախնդիրներ

Յուրաքանչյուր երկրի տնտեսության ինովացիոն զարգացումը՝ արդյունաբերական սեփականության օբյեկտների առևտրայնացումը և դրանց կիրառումը տնտեսության տարբեր ճյուղերում, հանդիսանում է տվյալ երկրի կայուն զարգացման կարևոր գրավականը: Համաշխարհային շուկայում մտավոր սեփականության օբյեկտների օգտագործման դիմաց գանձվող լիցենզիոն վճարների տարեցտարի աճող տեմպերի համատեքստում ՀՀ-ում դեռևս ցածր է ԱՍՕ-երի առևտրայնացման մակարդակը: Իրավիճակը պայմանավորող բազում հիմնախնդիրների շարքում կարևորվում է ոլորտում բարձր որակավորված մասնագետների պակասը:

Sargis KHANTARJYAN, Arsen HAYRIYAN
Current situation and problems of Industrial Property Objects' commercialization in RA

Keywords: intellectual property, industrial property objects, commercialization, problems of commercialization

Innovational development of every country's economy - industrial property objects' commercialization and their implementation in different sectors of economy, is an important guarantee for the sustainable development of the country. In the context of the World growing tendency in charges for the use of intellectual property we still have a low level of IPO commercialization in RA. Among many problems determining this situation the lack of highly qualified professionals in the field is highlighted.

Саркис КАНТАРДЖЯН, Арсен АЙРИЯН
Состояние и проблемы коммерциализации объектов промышленной собственности в РА

Ключевые слова: интеллектуальная собственность, объекты промышленной собственности, коммерциализация, проблемы коммерциализации

Инновационное развитие экономики каждой страны – коммерциализация объектов промышленной собственности и их внедрение в разных отраслях промышленности, является важной основой устойчивого развития страны. В контексте растущей мировой тенденции по использованию интеллектуальной собственности, мы по-прежнему имеем низкий уровень коммерциализации ОПС в РА. Среди многих проблем, определяющих эту ситуацию, выделяется нехватка высококвалифицированных специалистов в этой области.